ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանի շնորհավորական ուղերձը Կանանց միջազգային օրվա առթիվ

Սիրելի՛ կանայք,
շնորհավորում եմ ձեզ Կանանց միջազգային օրվա առթիվ

Մարտի 8-ը մեկն է տարվա 365 օրերից, երբ պետք է մեծարենք, ըստ արժանվույն գնահատենք ու մեր սերն արտահայտենք մեր մայրերի, տատիկների, քույրերի ու կանանց հանդեպ:

Բնության մեջ միևնույն ժամանակ այսքան հզորությունն ու գեղեցկությունը, ուժն ու նրբությունը, վճռականությունն ու հոգատարությունը միայն կնոջ մեջ է ամփոփված:

Ցանկանում եմ միշտ լինեք միջավայրում որտեղ ձեզ կին կզգաք, կլինեք սիրված ու կսիրեք: Այս և տարվա բոլոր օրերը ձեզ համար թող տոն լինեն, ձեր ամեն վայրկյանը թող լցված լինի խինդով, ուրախությամբ ու ժպիտով:

Մաղթում եմ առողջություն, երջանկություն, հարատև հմայք, գարնանային տրամադրություն ու անսպառ ժպիտ: